ՍԱՓՐԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՄԱՐԿ ՏՈՒԷՆԻ

Ամէն բան աշխարհում փոխւում է, բացի սափրիչներից, նոցա վարւեցողութիւնից և սովորութիւններից։ Դա երբէք չի փոխւում։ Ինչ որ մարդ սափրասենեակում տեսել է առաջին անգամը այնտեղ մտնելուց, այն միևնոյնն էլ, առանց առաջադիմութեան, նա կը տեսնի և յետոյ, մինչև իւր կեանքի վախճանը։

Այսօր առաւօտեան ես գնում էի, ըստ իմ սովորութեան, երեսս ածիլել տալու։ Ես տեսայ, որ սափրատանը մի մարդ է արդէն մտնում միւս փողոցից, մի հանդամանք, որ զարմանալի կերպով միշտ պատահում է։ Ես քայլերս մեծացրի. բայց նպատակիս չը հասայ։ Պարոնը մտաւ դուռնամէջը հէնց այն րոպէին, երբ ես հասել էի նոյնպէս դուռնը։ Ես մտայ նորա ետևից. բայց նա արդէն բռնեց միակ աղաւ մնացած աթոռը, որի մօտ կանգնած՝ էր սափրիչը։

Եւ այդ միշտ այդպէս է պատահում։ Ես նստեցի սպասելու, յուսալով, որ կը կարողանամ միւս երկու սափրիչներից բռնել նոցանից աւելի վարպետի աթոռը, որովհետև այդ «աւելի վարպետը» սկսել էր արդէն իւր մուշտարու մազերը սանրել, մինչդեռ նորա ընկերը դեռ օծում էր իւր յաճախորդի մազերի խոպոսները։

Ես մեծ հետաքրքրութեամբ հետևում էի սափրիչների գործողութեան։ Երբ ես նկատում էի, որ № 2 սափրիչը առաջ էր ընկնում, իսկ № 1-ը կանգ էր առնում մի րոպէ, խօսքի բռնւելով խանութը մտնող ապրանք առնողների հետ և թողնում էր իւր ձեռքի գործը, ես հասարակ կասկածից անցնում էի վրդովւած դրութեան։ Իսկ երբ № 1-ը վերջապէս գարձաւ իւր գործին իւր ընկերին հաւա-

սարեց և արդէն բաց էր անում յաճախորդից սրբիչը և նորա թշերից սրբում էր պուդրը, որից յետոյ նոցանից մէկը աւելի վաղ պէտք է ասէր «դայ հեսմեալը», — ես անյայտութիւնից սկսեցի կարծես խեղդուել։

Իսկ երբ ամենավճռական վայրկեանում՝ № 1-ը սկսեց խոզանակով ուղղել իւր պարոնի ունքերը, ես իմացայ, որ այդ վայրկեանով նա կորցրաւ իւր աւաջնութիւնը և ես այնպէս սաստիկ զայրացայ այդ բանից, որ դուրս եկայ սափրասենեակից, որպէս զի չընկնեմ № 2-ի ձեռքը, որովհետև ես այնքան ամուր բնաւորութիւն չունեմ, որ սափրիչին ասեմ՝ թէ ես նորան չեմ ուզում, այլ սպասելու եմ, մինչև միւս սափրիչը աղաւի։

Ես փողոցում կանգնեցի մօտ տասնեհինգ րոպէ և դարձայ յուսալով, որ այժմ ցանկացածիս կը հասնեմ իսկոյն։ Սակայն այժմ բոլոր տեղերը բռնուած էին և դեռ մի չորս պարոն էլ նստած սպասում էին, լուռ, անխօս, բարկացած և տխուր, ինչպէս որ լինում են սափրատանը նստած և հերթին սպասող յաճախորդները։

Ես նստեցի մի կոշտ, հին դահաւորակի վերայ և զբաղուեցի ընթերցանութիւնով։ Ես կարդում էի շրջանակներում դրած զանազան յայտարարութիւնները, որոնք անխիղճ կերպով փառաբանում էին մազեր ներկելու չը գիտեմ ինչ դեղերը, նայում էի շիշերին կպցրած ցուցադրները, ուսումնասիրում էի պատերին կպցրած, ամեն պատերազմական պատկերների աղտոտած և պատռոտած մնացորդները, նախագահների, հեշտասէր թեք ընկած սուլթանների, անհամ և միշտ երիտասարդ աղջիկների պատկերները և անիծում էի ուրախ դեղձանիկին և բարձրագոչ թութակին, որոնք համարեա ամեն մի սափրատան անհրաժեշտութիւնն են կազմում։ Երբ այդ բոլորից զզուեցի, սկսեցի թերթել անցեալ տարուայ պատկերազարդ թերթի քիչ պատռոտած համարները, որոնք անկարգ թափուած էին աղտոտ կոլոր սեղանի վերայ և խորասուզուեցի հին, անցած-դնացած եղելութիւնների անհոռնի պատկերների աշխարհը։

Վերջապէս հասաւ և իմ հերթը։ Լսուեց սափրիչի ձայնը. «դայ հետ՝ հեալը» և ես ընկայ հէնց էլի № 2-ի ձեռքը։ Այդ միշտ այդպէս է պատահում։ Ես համեստ ձայնով նկատեցի, որ շտապում եմ. բայց նա իսկի այնումը չը դցեց։ Յետ տարաւ ղլուխս և վզիս տա-

կից կապեց անձեռոցիկը։ Ցետոյ մատներով կոխեց սրբիչը օձիքիս տակը։ Նոյն մատներով նա խառնեց իմ մազերը և յայտնեց, որ պէտք է նորանց խուզել։ Ես պատասխանեցի, որ չեմ ուզում խուզել տալ։ Նա դարձեալ մատներով վերի վայր արաւ մազերս և ասաց, որ ներկայ հանգամանքներին նայած՝ չափազանց երկայն են և պէտք է կարճացնեն. նա մանաւանդ ետևի կողմից։ Ես բացատրեցի, որ միայն մի շաբաթ է, ինչ ես խուզել եմ տուել մազերս։ Սափրիչը մի վայրկեան տխուր մտածմունքի մէջ ընկաւ և յետոյ մի տեսակ նախանձոտ արհամարհանքով հարցրեց.

—Ո՞վ է խուզել։

Ես նորան իսկոյն հանդատացրի՝

—Հէնց դուք ինքներդ։

Ցետոյ սկսեց փրփրացնել սապոնը, երբեմնապէս կանգ առնելով և հայելուն մօտենալով, որպէս զի լաւ տեսողի կամ իւր կերպարանքը կամ մի որ և է պուզուկ։ Ցետոյ սապոնեց վերից մինչև ներքևը երեսս մէկ կէսը և ուզում էր սապոնել միւս մասն էլ, երբ յանկարծ նորա ուշքը գրաւեց շների մի կուիւ։ Նա վազեց լուսամուտի մօտ և կանգնեց այնտեղ, զարմանալով կուռի տեսքով, մինչև որ գրաղ չեկաւ միւս երկու սափրիչների հետ և երկու շիլինգ տանուլ չը տուաւ։ Այս դէպքը ինձ մեծ ուրախութիւն պատճառեց։ Նա վերջացրեց սապոնելը և աւելորդ փրփուրները սկսեց ձեռքով թոցնել դէնս։

Դորանից յետոյ սկսեց երկայն ժամանակ ածելին սրել մի ինչ որ հնացած կաշու վերայ և շարունակելով այդ սրելը՝ նա պատմեց նախընթաց երեկոյի ժողովրդական դիմակահանդէսի մասին, որտեղ նա ինքը եղել է՝ վերան գցած կարմիր ծիրանի, որի շրջակարը սպիտակ աքիսի մորթից է եղել, ինչպէս այդ վայել է թագաւորներին։ Նորա ընկերները ակնարկներ արին՝ թէ մի տիկին հիացած է եղել դիմակաւոր թագաւորից. սափրիչս՝ թէև ասաց, որ նորա ընկերները նորան ձանձրացրին այդ ակնարկներով, բայց ինքը շատ ուրախ էր այդ վայրահաչութիւնից և ուզում էր, որ նա շարունակի։

Այս հանգամանքը նորան դրդեց մի անգամ ևս նայելու հայելուն։ Նա ածելին վայր դրաւ և իւր մազերը սանրեց, ճակատի վերայից մի խոպոպ յետ տանելով և մի նուրբ զուգաչափութեամբ քունքի մազերը սանրեց ականջների վերայ։ Մինչ այս մինչ այն՝

իմ թշերին քսած սապոնը չորացաւ, և ըստ երևութին, ծծուեց կաշուիս մէջ։

Վերջապէս սափրիչս սկսեց ածիլել, նախօրոք մատները պարզելով իմ երեսի վերայ, որ տարածի կաշին, և անդադար գլուխս պտտեցնելով այս ու այն կողմ, ինչպէս նա յարմար էր դատում։ Քանի որ նա երեսիս կողքի մասերումն էր, ես չարչարուում չէի։ Իսկ երբ նա սկսեց ծնօտս քերել, քերթել և մաշկել, պէտք է խոստովանեմ, արտասուքը լքցրաւ աչքերս։

Յետոյ սափրիչը բռնեց քթիցս, որպէս դի ապահով կերպով կարողանայ ածիլել վերի շրթունքիս անկիւնը։ Այս հանդամանքի շնորհիւ, ես մի գիւտ արի. ես համոզուեցի, որ սափրիչիս պարտաւորութիւնների մէջն է եղել և նաւթի լամպարների սրբելը (նաւթի հոտը ես կարողացայ ճանաչել)։ Իսկ առաջ ես թեթև ամոթաբար ինձ հարց էի տալիս, արդեօք ո՞վ էր այդ բանը կատարում՝ սափրիչները թէ նոցա տէրը։

Միևնոյն ժամանակը ես զուշակութիւններ էի անում, թէ որտեղ է սափրիչս բարեհաճելու երեսս կտրելու, բայց նա իմ վճռից առաջ ընկաւ և նախ, քան ես կը կարդայ որէի մտածմունքներս, նա թռցրաւ ծնոտիս կաշու մի կտորը։

Դորանից յետոյ՝ սրեց ածելին, որ ի հարկէ՝ նա կարողէր կտրելուց առաջ անել։ Պէտք է ասեմ, որ ես չեմ սիրում շատ տակուց ածիլելը և չէի ուզում թոյլ տալ, որ նա երկրորդ անգամ ինձ քերթի։ Ուստի համոզում էի նորան, որ նա թողնի անտանելի գործիքը։ Ես երկիւղ էի կրում, որ նա ածելին պատրաստում է իմ ծնօտի այն մասի համար, ուր մի փոքրիկ բշտիկ կար, որի ածելելը կրկնելուց շատ պէտք է ցաւէր։ Բայց սափրիչը հանգստացրաւ, ասելով, որ նա պէտք է միայն փոքր ինչ հաւասարեցնի և հէնց այդ վայրկեանին դիպաւարգելուած տեղին։ Ինձ վախեցնող կտրուածքը տեղի ունեցաւ և սկսեց սաստիկ ցաւ։

Այդ ժամանակ իմ չարչարողը թաթախեց սրբիչը դափնեաբալի հեղուկի մէջ և սկսեց նորանով սւաղել երեսս, կարծես թէ երբ և իցէ մէկը աշխարհումն այդ տեսակ լուացել է իւր երեսը։ Յետոյ սկսեց սրբիչի չոր մասով հարել երեսս, կարծես թէ երբ և իցէ աշխարհումն մէկը այդ տեսակ սրբել է իւր երեսը։ Բայց սափրիչները քիչ դիտեն քրիստոնէաբար երես սրբելը։

Այնուհետև նա նորից թացացրեց կարած տեղը, ածեց վերան պուդր, կրկին թացացրեց և երևի անվերջ կը թացացնէր և պուդր կ'ածէր, եթէ ես վճռողաբար չը բողոքէի։ Այն ժամանակ թշուառականը վերջին անգամ պուդր ածեց երեսիս, յետոյ բռնեց մազերս խորքի նման և սկսեց խառնփնթորել, վերիվայր անել։ Յետոյ առաջարկեց ինձ, որ լուանալ տամ գլուխս սապոնաջրով և սկսեց հաւատացնել, որ իմ մազերի համար դա շատ կարևոր է։ Ես պատասխանեցի, որ երեկուայ օրը ինքս լաւ լուացել եմ բազնիսումը։ Ուրեմն կրկին նորա խօսքը կորեցի։

Բայց սափրիչս ձեռք չը վեր առաւ և առաջարկեց ինձ մի ինչ որ «մազերի համար կախարդական հեղուկ»։ Ես մերժեցի։ Այն ժամանակ նա սկսեց գովել «տուալետի հրաւանք» անունով նոր մի օծանելիք, որ ուզում էր ինձ վերայ կոցնել։ Կրկին մերժեցի։ Բայց նա ցատ չը կացաւ ինձնից և առաջարկեց մի ինչ որ իւր հնարած անուշոտան առաւելագոյն։ Երբ որ այդ էլ չը դնեցի, նա ինձ առաջարկեց, որ գոնէ մի զմելի դնեմ։

Այս առաւաւերի անաջողութիւնից յետոյ, նա չը լսելով բողոքիս՝ ինձ ոտից մինչև գլուխս սրսկեց հոտաւէտ հեղուկով, մազերս սեղմեցին արաւ և բաւական էլ դուրս հանեց արմատից, իսկ մեռացածները սանրեց, կարգին ճղեց և հարթեց։

Վերջապէս երբ նա սկսեց իմ նոսր ունքերս էլ սանրել և շարունակել իւր լեղուագարութիւնը—ես լսեցի կէսօրուայ զանգը և այդտեղ սրտի ցաւով իմացայ, որ հինգ բոպէ ուշացել եմ երկաթուղու գնացքից։ Այդ ժամանակ միայն նա հանեց վզիցս սրբիչը, զգոյշ թափ տուաւ երեսիս վերայ եղածը, մի անգամ էլ խոզանակը խաղացրեց ունքերիս վերայով և ուրախ բացականչեց.

—Դայ հեռեալը։

Այս միևնոյն սափրիչը երկու ժամից յետոյ յանկարծ ուշաթափուեց և մեռաւ կաթուածից։

Ես չարախնդացութեամբ ուզում եմ վրէժս առնել նորանից, ուստի վճռել եմ գնալ նորա թաղման։